ՀԱՄԱԳԱՅՆԱԳԻՐ
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԾԱԳՄԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համագործակցության մասնակից պետությունները,

գիտակցելով այն նշանակությունը, որ ծագման երկրները տալիս են իրենց հոգեւոր, մշակութային եւ պատմական ժառանգության անբաժանելի մաս հանդիսացող մշակութային արժեքների վերադարձմանը,

նկատի ունենալով մշակութային արժեքների վերադարձման կամ վերադարձման իրավունքի վերականգնման մասին դրանց ծագման երկրներին ՄԱԿ-ի Գլխավոր խորհրդաժողովի բանաձեւի, ինչպես նաեւ 1970 թվականի նոյեմբերի 14-ի "Մշակութային արժեքների ներկրումը, արտահանումը եւ սեփականության իրավունքի փոխանցումն արգելող եւ կանխող միջոցների մասին" Կոնվենցիայի դրույթները,

հաստատելով, որ ժողովուրդներին իրենց արվեստի գործերի, հուշարձանների, թանգարանային նմուշների, արխիվների, ձեռագրերի, փաստաթղթերի եւ մշակութային ու պատմական հազվագյուտ իրերի վերադարձը կծառայի մշակութային արժեքների պահպանման եւ հետագա զարգացման, ազգային մշակույթի վերածնունդի ազնվաբարո խնդրին եւ կնպաստի անկախ պետությունների միջեւ համագործակցության ամրապնդմանը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Մասնակից պետությունները կնպաստեն պատմական եւ մշակութային արժեքները ծագման երկրներ վերադարձնելուն:

ՀՈԴՎԱԾ 2

Մասնակից պետությունները, հավասարության հիմունքներով, հիմնում են միջկառավարական հանձնաժողով, Համագործակցության մասնակից պետությունների պատմական եւ մշակութային արժեքների վերադարձման գործնական աշխատանքի եւ մեխանիզմի ստեղծման, վերադարձման ենթակա պատմական եւ մշակութային արժեքների կատեգորիաների որոշման համար:

ՀՈԴՎԱԾ 3

Մասնակից պետությունները հիմնում են ազգային հանձնաժողովներ ինչպես համապատասխան պետության տարածքում, այնպես էլ Համագործակցության մյուս մասնակից պետություններում գտնվող պատմական եւ մշակութային արժեքների կանոնավոր ցուցակներ կազմելու համար:

ՀՈԴՎԱԾ 4

Մասնակից պետությունները ազգային հանձնաժողովների փորձագետներին հնարավորություն կընձեռեն՝ ծանոթանալու միմյանց պետական թանգարանների, գրադարանների եւ արխիվների հիմնադրամների հետ:

ՀՈԴՎԱԾ 5

Մասնակից պետությունները կապահովեն ազգային փոքրամասնությունների եւ Համագործակցության մյուս մասնակից պետությունների ժողովուրդների մշակութային ժառանգության պատշաճ պահպանությունը, ներառյալ պատմական, կրոնական եւ մշակութային հուշարձաններինը այն վիճակում, որում դրանք գտնվում են ներկայումս:

ՀՈԴՎԱԾ 6

Մասնակից պետությունները կնպաստեն իրենց համապատասխան մշակույթների վերաբերյալ փոխադարձ գիտելիքների ընդլայնմանը: Նրանք նաեւ կխրախուսեն համագործակցությունն ու փոխանակումները մշակույթի եւ ստեղծագործական գործունեության բոլոր բնագավառներում:

ՀՈԴՎԱԾ 7

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Համաձայնագրի բնօրինակը ի պահ է տրվում Բելառուսի Հանրապետության կառավարությանը, որը կլինի դրա ավանդապահը:

Կատարված է Մինսկ քաղաքում 1992 թվականի փետրվարի 14-ին, մեկ բնօրինակով, մասնակից պետությունների պետական լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի փետրվարի 14-ից: